

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Համացանցի ծառայության մատուցման

շրջան (քաղաք) համայնք

(ամսաթիվ)

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր», որը գործում է ընկերության կանոնադրության և ԼՂՀ տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների նախարարի կողմից տրված 2001թ. նոյեմբերի 19-ի N 315-1/2 լիցենզիայի հիման վրա, ի դեմս գլխավոր տնօրեն Կարելին Օդաբաշյանի, մի կողմից, և

(իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անուն-ազգանունը,)

(կազմակերպության կողմից լիազորված անձի անուն, ազգանուն, հայրանուն կամ քաղաքացու անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրի կամ սահմանված կարգով ձևակերպված անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալներ) այսուհետ «Բաժանորդ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին`

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագիրը սահմանում է «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի և համացանցից օգտվողների միջև փոխհարաբերությունները:

1.2. Համացանցի մուտքի և համացանցի ծառայության տրամադրում`

1.2.1. Օպտիկամանրաթելային կապի միացում,

1.2.2. DSL մոդեմով կապի միացում,

DSL մոդեմի միջոցով տրամադրվող համացանցի հասանելիության համար պահանջվում է թվային ֆիքսված հեռախոսակապի ակտիվ գիծ: Թվային ֆիքսված հեռախոսակապի անջատման դեպքում Բաժանորդը զրկվում է համացանցի ծառայությունից, սակայն ծառայության սակագնի հաշվեգրումը շարունակվում է:

1.2.3. Ռադիոմոդեմով միացում,

1.2.4. IP-հասցեի տրամադրում,

1.2.5. Wi-Fi մոդեմով միացում,

Անուն

--	--	--	--	--	--	--	--	--	--

Ծածկագիր

--	--	--	--	--	--	--	--	--	--

Միացման վարձի չափը \_\_\_\_\_:

### 2. Օպերատորի իրավունքներն ու պարտականությունները

- 2.1. Օպերատորը պարտավոր է`
- Տրամադրել և ապահովել համացանցի բնականոն աշխատանք և հրապարակված որակին համապատասխան ծառայության մատուցում.
  - Գրանցել Բաժանորդին համացանցում և շնորհել վավերապայմաններ.
  - Ապահովել Բաժանորդի շուրջօրյա մուտքը դեպի ցանց, բացառությամբ սարքավորումների տեխնիկական սպասարկման ժամանակահատվածից.
  - Տեղեկացնել Բաժանորդին համացանցի աշխատանքում փոփոխությունների մասին.
  - Տրամադրել հեռախոսով խորհրդատվական ծառայություն` համացանցի հետ կապված.
  - Չհրապարակել Բաժանորդի համացանցի վավերապայմանները:

2.2. Օպերատորն իրավունք ունի`

- Սահմանել և փոփոխել բաժանորդի համացանցի ծառայությունների մատուցման պայմաններն ու դրույթները, այդ մասին 10 (տաս) օր առաջ տեղեկացնելով Բաժանորդին` նաև Օպերատորի պաշտոնական վեբ կայքում տեղեկատվական նյութ տեղադրելու միջոցով:
- Օպերատորը իրավունք ունի ինքնուրույն որոշել Բաժանորդի համացանցի ծառայությանը միանալու տեխնիկական պայմանները.
- Դադարեցնել համացանցի ծառայությունը սույն պայմանագրի դրույթների խախտման դեպքում.
- Բաժանորդի կողմից Օպերատորի հանդեպ համացանցի ծառայության դիմաց նախկինում գոյություն ունեցող պարտքը փոխանցել Բաժանորդի համացանցի ծառայության հաշվեկշիռին:

### **3. Բաժանորդի իրավունքներն ու պարտականությունները**

#### **3.1. Բաժանորդը պարտավոր է՝**

- Յետևել պայմանագրի պայմաններին.
- Չփոխանցել 3-րդ անձանց իր նշանաբառը ցանցում աշխատելու համար.
- Ապահովել Օպերատորի կողմից ներկայացված հաշիվների ժամանակին վճարումը, համաձայն կցված հավելվածի.

- Չեռնպահ մնալ գործող օրենսդրությանը հակասող ցանկացած նպատակով Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններն օգտագործելուց.

- Մյուս բաժանորդների պատիվը, արժանապատվությունը վիրավորող տեղեկություններ չտարածել.

- Չերծ մնալ առանց Օպերատորին գրավոր համաձայնության Օպերատորի կողմից մատուցած ծառայությունները վերավաճառելուց, ինչպես նաև այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել երրորդ անձանց ապօրինի հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելուն:

#### **3.2. Բաժանորդն իրավունք ունի՝**

- Պահանջել Օպերատորից պատշաճ կերպով մատուցել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները.

- Օրենքով սահմանված կարգով պահանջել իր տվյալների վերաբերյալ գաղտնիությունը.

- Օգտվել օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

### **4. Վճարումների կարգը**

4.1. Բաժանորդը պարտավորվում է նախօրոք վճարել հաջորդող ամսվա համացանցի ծառայության ամսավճարը՝ մինչև ընթացիկ ամսվա վերջին օրը ներառյալ:

4.2. Վճարումը «4.1» ենթակետով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Օպերատորն իրավունք ունի առանց որևէ ծանուցման դադարեցնել ծառայության մատուցումը:

### **5. Պայմանագրի գործողության ժամկետը և լուծումը**

5.1. Սույն պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում Օպերատորի կողմից Բաժանորդից բոլոր պահանջվող փաստաթղթերը և վճարներն ընդունելուց հետո մեկ օրվա ընթացքում:

#### **5.2. Օպերատորն իրավունք ունի**

- միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը առանց որևէ ծանուցման, եթե Բաժանորդը «4.1» կետով սահմանված ժամկետից ավելի քան մեկ ամիս ժամկետով ուշացրել է Պայմանագրով սահմանված որևէ վճարում,

- միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը, եթե համապատասխան հայտով դիմում է այն տարածքի (բնակարանի) սեփականատերը, որտեղ սույն պայմանագրի շրջանակներում մատուցվում է համացանցի ծառայությունը:

5.3. Բաժանորդն իրավունք ունի միակողմանի կարգով վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը 1 շաբաթ առաջ գրավոր ծանուցելով Օպերատորին:

5.4. Պայմանագրի լուծումը ցանկացած դեպքում չի ազատում կողմերին սույն պայմանագրից բխող իրենց վճարային պարտավորություններից:

### **6. Կողմերի պատասխանատվությունը**

6.1. Օպերատորը և բաժանորդը պատասխանատվություն են կրում համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և սույն պայմանագրի:

#### **6.2. Օպերատորը պատասխանատվություն չի կրում.**

- Իր հսկողությունից դուրս վթարի կամ չնախատեսված դեպքերի հետևանքով ծառայությունների մատուցման որևէ ընդհատման կամ խափանման համար.

- անհաղթահարելի ուժ առաջանալու պատճառով Ծառայության չտրամադրման, ինչպես նաև երրորդ անձանց կամ Բաժանորդի մեղքով կամ նրա միջամտությամբ կամ սարքերի ինքնակամ տեղափոխումների հետևանքով վերջինիս տրամադրվող համացանցի արագության տատանման, նվազեցման և այլ կերպ համացանցի վատթարացման համար.

- համացանցի արագության կայունության համար այն դեպքերում, երբ Բաժանորդը համացանցին միանալու նպատակով օգտագործում է չսերտիֆիկացված սարքավորումներ.

- համացանցի արագության կայունության համար այն դեպքերում, երբ նույն կետին համացանցի ծառայությունից օգտվելու նպատակով միանում են մեկից ավելի սարքավորումներ.

Վերոհիշյալ դեպքերում բաժանորդը հատուցման որևէ պահանջ չի կարող ներկայացնել Օպերատորին.

- Բաժանորդի կողմից ստացած և ուղարկած տեղեկության բովանդակության համար.

- Բաժանորդի վավերապայմաններով ուրիշի մուտք գործելու դեպքում.

6.3. Սույն պայմանագրի «4.1» ենթակետով սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ հաջորդող ամսվա յոթերորդ օրվանից սկսած բաժանորդը համացանցից օգտվելու համար պարտավոր կլինի ամսավճարի հետ մեկտեղ վճարել վերամիացման վարձ՝ 1100 ՀՀ դրամի չափով:

6.4. Բաժանորդի կողմից ցանցի ցանկացած անօրինական օգտագործման, ուրիշի գաղտնաբառի օգտագործմանը ցանցից օգտվելու և ուրիշին պատկանող տեղեկատվությանն ապօրինի տիրապետելու դեպքերում Բաժանորդը ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության:

